
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՊՐԵՍՅԱՆ Ա. Գ.

«Մատեան ողբերգութեան» երկի առաջին, թեկուզ հատվածական թարգմանություններն այնպիսի հետաքրքրություն առաջացրին Գրիգոր Նարեկացու հանճարի նկատմամբ, որ հայ ժողովրդի մեջ հայտնի որպես «Սուրբ Գրքի» գրեթե հավասար հրաշագործ գործություն ունեցող «Մատեանը» երկու անգամ թարգմանվեց ֆրանսերեն, երեք անգամ՝ անգլերեն, չորս անգամ՝ ռուսերեն, թարգմանվեց նաև իտալերեն, արաբերեն, պարսկերեն և բազմաթիվ այլ լեզուներով: Նարեկացին հայ, ֆրանսիացի, ռուս և այլ թարգմանիչների շնորհիվ իր արժանի տեղը գրավեց համաշխարհային գրականության մեջ: Եվ, անշուշտ, թարգմանիչների շնորհիվ էր, որ 2015-ի ապրիլի 12-ին Վենետիկի Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի Ֆրանցիսկոս Առաջին պապը Նարեկացուն հռչակեց Տիեզերական վարդապետ:

Նարեկացու հանճարին առաջինը հաղորդակից են դառնում ֆրանսիացիները. 1900 թ. «*Mercure de France*» գրական հանդեսում Արշակ Չոպանյանը ներկայացնում է Նարեկացուն՝ հրատարակելով նաև «Մատեանի» մի քանի հատվածի՝ իր թարգմանությունը: Եվ ժամանակի շատ նշանավոր գրողներ ու քննադատներ էժեն Բորեն¹, Ֆելիքս Նելլը², Լյուկ-Անդրե Մարսելը իրենց հիացմունքն են արտահայտում այդ առթիվ: Ֆ. Նելլը թարգմանում է «Մատեանի» ԽԱ և 2 գլուխները, Լյուկ-Անդրե Մարսելը 1950-1951 թթ. հրատարակում է «Մատեանից» նոր թարգմանություններ, իսկ գրա-կանագետ Ժան Բալարը 1953-ին առանձին հատորով լույս է բնծայում Մարսելի թարգմանությունները³: Մարսելը խոստովանում է. «Նարեկացուն թարգմանելիս հենց առաջին իսկ բառերից նկատում ես, որ ֆրանսերենը մնում է ապշահար՝ Նարեկացու բառապաշարի ճոխության յարաբերությամբ»⁴:

¹ Boré E. *Correspondance et memories d'un voyageur en Orient*, Paris, 1840, t. 2, p. 92.

² Néve F. *L'Arménie Chrétienne et sa Littérature*, Louvain, 1886, pp. 256-268.

³ Grégoire de Narek et l'ancienne poésie arménienne, Paris, 1953.

⁴ Ղազինյան Ա., Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական Արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 56: *Sté u nawi Grégoire de Narek et l'ancienne poésie arménienne*, էջ 19-36:

Այս թարգմանությունների կարևորությունն անժխտելի էր, բայց դրանք կազմում էին «Մատեանի» միայն մի փոքր մասը, և զգացվում էր այդ երկն ամբողջությամբ թարգմանելու անհրաժեշտությունը:

1961-ին Փարիզում ֆրանսիական «Քրիստոնեական աղբյուրներ» հրատարակչությունը լույս է ընծայում «Մատեանի» առաջին ամբողջական ֆրանսերեն թարգմանությունը՝ «Աղօթամատեան» վերնագրով: Թարգմանիչ հայր Սահակ Քեշիշյանը այն կատարել է մեծ պատասխանատվությամբ և գիտական ճշգրտությամբ՝ տասնութ տարի նվիրելով այդ հսկայական ու դժվարին գործին⁵: Նա Նարեկացուն ներկայացրել է որպես հայ եկեղեցու սրբերից մեկը, իսկ «Մատեանը»՝ հոգևոր ստեղծագործություն: Համեմատության համար մի հատված ներկայացնենք այդ թարգմանությունից.

*Ձա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ տեսողդ գաղտնեաց՝:*

La voix de mes soupirs,
le gémissement de mon coeur,
le cri de mes lamentations,
vers Toi je n'ŕve en offrande,
Ô Toi qui vois les secrets⁷.

«Մատեանի» նկատմամբ հետաքրքրությունն ավելի է աճում ֆրանսիական հասարակության մեջ, երբ լույս է տեսնում նշանավոր հայագետ Ժան-Պիեռ Մահեի և նրա կնոջ՝ Աննիի կատարած թարգմանությունը: Մահեն թարգմանում է «Մատեանի» գիտաքննական բնագրից (Ե., 1985)՝ հինգ տարի նվիրելով այդ գործին: Հայագետի համար «Մատեանն» ունի ոչ միայն քերթողական և իմաստասիրական, այլև խրատական, հորդորական կամ, ինչպես ինքն է բնո-

⁵ Սահակ Քեշիշյանն ինքնակենսագրականում գրել է, որ ինքը 1943-1961 թթ. թարգմանել է Ս. Գրիգոր Նարեկացու «Աղօթամատեանը» (տե՛ս Քեշիշյան Ս., Ինքնակենսագրական: Հրատարակված չէ):

⁶ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Ե., 1985, գլ. Ա, էջ 246: «Մատեանի» համեմատվող տողերն այսուհետև մեջբերելու ենք այս հրատարակությունից՝ փակագծերում նշելով գլուխը և էջը:

⁷ Grégoire De Narek. Le Livre De Prières, introduction, traduction de l'arménien et notes par Isaac Kéchichian, Paris, 1961, 1 prière, p. 57.

րոշում, հոգեվարժական արժեք⁸: Թարգմանությունն առանձնահատուկ է նաև կառուցվածքային առումով. «Մատենանի» ավելի մատչելի դարձնելու նպատակով Մահեն այն դասակարգում է ըստ աղոթքների՝ ամեն աղոթքի համար բնորոշ խորագրով, ինչպես, օրինակ՝ *"Surmonter la crainte"*– «Վախի հաղթահարում» (4-9), *"De la charite a l'amour trinitaire"*– «Գթությունից դեպի սիրո երրորդություն» (13-15), *"Apres la communion"*– «Վանականներից հետո» (54-59), *"Requetes et intercessions"*– «Պահանջներ և աղոթքներ» (80-83): Այս թարգմանությունն ամբողջական է և ընդգրկում է նաև «Մատենանի» 34, 75, 92, 93 գլուխները: Նախորդ թարգմանիչներն իրենց աշխատանքներում չէին ընդգրկում այդ, այսպես կոչված, դավանաբանական գլուխները՝ պատճառաբանելով որ դրանք ավելի ուշ են ներառվել «Մատենանի» մեջ⁹: Սակայն Ժան-Պիեռ Մահեն իրավացիորեն գրում է. «Վաղուց է նկատվել, որ «Մատյանի» 34-րդ, 75-րդ, 92-րդ և 93-րդ գլուխները շատ տարբեր են մնացածներից: Տարբերությունը մի քանի հատկանիշներից է կախված: Նշված գլուխների ոճը նվազ քերթողական և արձակին ավելի մոտիկ է, քան թե մնացածներինը: Դավանաբանական կամ աստվածաբանական բովանդակությամբ դրանք առանձնանում են Գրիգորի սովորական մաղթանքներից և խոստովանություններից: Մնացածներից ձևով և բովանդակությամբ տարբերվող այս գլուխները ոչ միայն պատկանում են պոեմին, այլև ընդգծում են դրա հիմնական բաժինները»¹⁰: Ահա Բան Ա-ի վերոնշյալ հատվածի՝ Մահեի թարգմանությունը.

Vois des soupirs et des gémissements du coeur, clameur endeuillne:
C'est l'offrande que je fais monter vers toi, visionnaire de tout secret¹¹.

Երկար ժամանակ Նարեկացին անհայտ էր ռուս ընթերցողին: 1966-ին Լևոն Մկրտչյանը և Վազգեն Գևորգյանը տողացի թարգմանում են «Մատենանի» առանձին հատվածներ¹², ինչպես, օրինակ.

Մի՛ լիցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել,

⁸ Ժան-Պիեռ Մահե, «Ողբերգութեան մատենանի» կառուցվածքի և ստեղծագործման մի քանի հարցեր (Պատմա-բանասիրական հանդես, 1986, - 4, էջ 100-103):

⁹ «Մատենանի» ռուս թարգմանիչ Լ. Միլի թարգմանության մեջ ընդգրկված չեն «Մատենանի» 75, 92, 93 գլուխները, իսկ Վ. Միկուշնիչի թարգմանությունում՝ 92 և 93 գլուխները:

¹⁰ Տե՛ս Ժան-Պիեռ Մահե, նշվ. հոդվ., էջ 100-103:

¹¹ Grégoire De Narek. *Le Livre De Lamentation, introduction, traduction et notes par Annie et Jean-Pierré Mahe, E., 2012, 1 prière, p. 34.*

¹² Այդ մասին տե՛ս Джанполадян М. Н. Гребнев – переводчик «Книги скорби» Григора Нарекаци, «Когда строку диктует чувство», Е., 2006, с. 137.

Ողբալ, եւ ոչ արտասուել,
 Խորհել, եւ ոչ հառաչել,
 Ամպել, եւ ոչ անձրեւել,
 Ընթանալ, եւ ոչ հասանել (Բ, 252):

Не дай испытать мне муки родов и не родить,
 Скорбеть и не плакать,
 Мыслить и не стенать,
 Покрыться тучами – и не пролиться дождем,
 Идти – и не дойти¹³.

Դրանց հիման վրա Վ. Զվյագինցևան «Մատենից» թարգմանում է որոշ հատվածներ: 1966 թ. հրատարակվում են 40 տող՝ 30 և 50-րդ գլուխներից, իսկ 1969-ին՝ 16 տող՝ 2-րդ գլխից:

1969 թ. Երևանում լույս է տեսնում «Գրիգոր Նարեկացի» վերնագրով փոքրածավալ գիրքը. այն ընդգրկում էր «Մատենից» 6 գլուխ (Ա, ԻԳ, Լ, ԾԵ, Ձ, ՂԵ)՝ Նաում Գրեբնևի թարգմանությամբ: Սա էլ դառնում է ռուսերենով Նարեկացու հայտնության սկիզբը: Դրանից հետո հանճարեղ երկին ձոնվում են բանաստեղծություններ, հոդվածներ: Իսկ Ն. Գրեբնևը նորանոր հատվածներ էր թարգմանում: 1972 թ. Լենինգրադում հրատարակվում է հայ միջնադարյան քնարերգությունն ընդգրկող ռուսերեն մի ժողովածու, որտեղ Ն. Գրեբնևը ներկայացնում է 17 գլուխ «Մատենից»: Իսկ արդեն 1977 թ. նրա թարգմանությամբ լույս է տեսնում «Մատենանոցերգութեան» գիրքը՝ գրաբար բնագրի հանդիպադրումով, որն ընդգրկում էր 42 գլուխ¹⁴: Թարգմանիչը փորձել է հարազատ մնալ բնագրին՝ Նարեկացու ազատ ոտանավորն այդպես էլ թարգմանելով: «Սակայն ինձ ոչ մի բան չհաջողվեց, - գրում է Գրեբնևը, - դուրս եկավ «ժամանակակից մի երկ», որը չէր փոխանցում ոչ հնության համը, ոչ էլ ստեղծագործության ոգին»¹⁵: Եվ նա Նարեկացու ազատ ոտանավորը թարգմանում է հանգավոր տողերով.

Ամենակալ Աստուած բարերար, ստեղծիչ բոլորից,
 Լու՛ր հառաչանաց ձայնիս վտանգի
 Եւ յերկիրդ տազնապի ապագայիցն կարծեաց
 Փրկեա՛կարող զարութեամբ՝ զերծեալ ի պարտեաց,
 Քանզի բաւական ես յամենայնի առ ամենայն հնարս զարանալ՝

¹³ Мкртчян Л. Мятажный гений. Григор Нарекаци, Книга скорби. Предисловие, Е., 1977, с. 15.

¹⁴ Джанполадян М., նշվ. աշխ., էջ 137:

¹⁵ Гребнев Н. Поэтическая археология (Читая Нарекаци), Е., 1974, с. 85.

Անբաւ մեծութեամբ եւ իմաստութեամբ անսահմանելեաւ (Խ, 408):

Не отвергай, Господь, моих молений,
Избавь меня от всех грехов бывших,
От нынешних и будущих сомнений.
Творец всего живого, всех живых,
Лишь Ты один—безмерное величие,
Ты зришь и сходство наше и различье,
Всесильный совершитель дел благих¹⁶.

Ապա լույս են տեսնում նաև «Մատենի» ռուսերեն երկու նոր թարգմանություններ՝ Լ. Միլի (Ե., 1984) և Վ. Միկուշնիչի (Մ., 1985) հեղինակությամբ:

Գրիգոր Նարեկացու չափածոն Միկուշնիչը համարում է «վերհանգային բանաստեղծություն»՝ իտացած իմաստների կատարյալ ներդաշնակությամբ, որի «վեհաշունչ համաչափության համեմատությամբ թե՛ արևմտյան սոնետը և թե՛ արևելյան զազելը թվում են քմահաճ էսթիզներ»¹⁷: Ահա նույն հատվածը՝ Միլի և Միկուշնիչի թարգմանությամբ.

Голос скорбных стенаний моей души, вопль горестный
К Тебе возношу, выношу на свет сокровенное¹⁸.

Скорбного сердца стон, вопль жалобы моей,
К тебе, всеведущий, в мольбе возношу¹⁹.

Առանձնահատուկ կարևորություն ունի «Մատենի» ռուսերեն տողացի թարգմանությունը: Մ. Դարբինյան-Մելիքյանի և Լ. Խանլարյանի շնորհիվ ռուս ընթերցողն առաջին անգամ ծանոթանում է Նարեկացու ստեղծագործության ամբողջական բովանդակությանը: Թարգմանիչները հավատարիմ են մնացել «Մատենի» ոգուն՝ ճշգրիտ ներկայացնելով հեղինակի մտքերը, պահպանելով երկի բովանդակությունը և գեղարվեստական առանձնահատկությունները²⁰.

Глас скорбных стенаний сердца моего, вопль горестный
Я возношу к тебе, тайновидец²¹.

¹⁶ Григор Нарекаци. Книга скорби, перевод Н. Гребнева, Е., 1977, гл. XL, с. 221.

¹⁷ Микушевич В. Целительный свет (Բանբեր Երևանի համալսարանի, 1981, № 3, էջ 73):

¹⁸ Григор Нарекаци. Книга скорбных песнопений, перевод Л. Миля, Е., 1984, гл. 1, с. 3.

¹⁹ Григор Нарекаци. Книга скорбных песнопений, перевод с древне-армянского В. Микушевича, М., 1985, гл. 1, с. 19.

²⁰ Григор Нарекаци. Книга скорбных песнопений, перевод с древне-армянского и комментариев М. О. Дарбинян-Меликян и Л. А. Ханларян, М., 1988, гл. 1, с. 10.

²¹ Նույն տեղում, էջ 29:

Սույն թարգմանությունն արժեքավոր է հատկապես «Մատեանի»՝ ռուսերեն տողացիից օգտվող թարգմանիչների համար: Այդպիսի օրինակներ են Միլի և Միկուշնիչի ռուսերեն թարգմանությունները (չնայած որ դրանք հրատարակվել են ավելի շուտ, քան տողացի տարբերակը), ինչպես նաև Իվան Դրաչի ուկրաիններեն թարգմանությունը:

Այսպիսով, եթե «Մատեանի» ռուս թարգմանիչ Ն. Գրեբնը Նարեկացու ազատ ոտանավորը հանգավորում է՝ փոխանցելով երկի բանաստեղծական ոգին, ապա Լ. Միլը և Վ. Միկուշնիչն ընտրում են տարբեր երկարության տողերից կազմված ազատ ոտանավորը, իսկ տողացի թարգմանության հեղինակները պահպանում են «Մատեանի» լեզվի, ոճի, կառուցվածքի առանձնահատկությունները:

Անգլերեն թարգմանությամբ Նարեկացին հայտնի էր դեռևս 1977-ին. գրող և թարգմանիչ Մ. Կուդյանը թարգմանել էր «Մատեանի» 25 գլուխները (Ա-ԻԵ) և առանձին գրքով հրատարակել Լոնդոնում: Խ. Խաչատուրյանի և Թ. Մամուելյանի թարգմանությունները լույս են տեսել Երևանում 2001 թ.: Խաչատուրյանի հրատարակածը՝ «Տխրության գիրք» խորագրով, «Մատեանի» անգլերեն առաջին ամբողջական թարգմանությունն է: «Լինելով միջնադարյան գրականության գլուխգործոցը, - գրում է նա, - այս երկն անհայտ էր քրիստոնեական աշխարհում, քանի որ գրված էր հին հայերենով»²²: Այս թարգմանությամբ Նարեկացին հասանելի է դառնում նաև անգլիախոս հասարակությանը:

Ձայն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ տեսողդ գաղտնեաց (Ա, 246):

The sound of grievous lamentations of my heart, the woeful wail
To You I raise, seer of mysteries²³.

Մամուելյանի թարգմանությունն ունի «Ս. Գրիգոր Նարեկացի» և «Ի խորոց սրտից խոսք ընդ Աստուծո» խորագրերը: Հեղինակն այն իրականացրել է «Մատեանի» գիտաքննական բնագրից, օգտվել է աշխարհաբար և օտարալեզու թարգմանություններից՝ չորս տարի նվիրելով այդ գործին: Գիրքն առանձնահատուկ է և արժեքավոր. այն երկլեզու հրատարակություն է՝ գրաբար բնագրի հանդիպադրումով: Թարգմանիչը հավատարիմ է մնացել բնագրի ոգուն և Սուրբ

²² Տե՛ս Grigor Narekatsi. *The Book of Sadnees*, translation and introduction by Khachatoor Khachatoorian, Yerevan, 2001, p. 5.

²³ Նույն տեղում, էջ 9:

Գրիգորի՝ «Մատենանի» ընկալմանը. այն աղոթքի, հոգևոր կյանքի, բժշկման և փրկության ուղեկից է ոչ միայն հայերի, այլև բոլոր ազգերի համար: Նրա թարգմանությունը մատչելի է և՛ ընթերցելու, և՛ աղոթելու համար²⁴.

Եւ արասցէ՛ս լինել դեղ կենաց
Առ հնարս ցաւոց հոգւոց եւ մարմնոց քոց ստեղծուածոց,
Զայս կարգեալ սահման ողբոց մատենի՝
Սկզբնեցելոյ յանուն քո, բարձրեալ (Գ, 258):

And may you make this book of mournful psalms
Begun in your name, Most High,
Into a life - giving salve for the sufferings of body and soul²⁵.

Ինչպես վերոնշյալ թարգմանությունները, այնպես էլ պարսկերենը, երկար տարիների աշխատանքի արդյունք է: Թարգմանիչ Ազատ Մաթյանը նշում է. «Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան Մատենան» ընդգրկումների տիեզերական ծաւալով, հոգեբանական թափանցումների խորութեամբ, լեզուի և ոճի անօրինակ հարստությամբ իր բացառիկ տեղն է գրավում համաշխարհային գրականության մեջ, որպէս միստիկական մտածողութեան բարձրագոյն արտայայտութիւններից մէկը և արժանի է աւելի մեծ ճանաչման եւ արժեւորման: Թարգմանութեան ձեռնարկելու հէնց սկզբից ես անդրադարձայ, որ բովանդակութիւնը ծանօթ է ինձ պարսկական դասական գրականութեան որոշ նմուշներից: Սա խոստովանութիւն է նաեւ այն մասին, որ ես այդ գրքի թարգմանութիւնը ձեռնարկեցի մի տեսակ միանգամից, առանց նախնական անհրաժեշտ ծանօթութեան: Բնականաբար անմիջապէս իմ դէմ ծառացաւ թարգմանութեան լեզուի խնդիրը, որը ինձ տանում էր դէպի պարսկերէն լեզուով գրուած նմանատիպ, այսինքն միստիկ, գրականութիւնը: Արդիւնքում ստացուեց հին եւ ժամանակակից պարսկերէնի մի համադրութիւն»²⁶:

Այսպիսով, կարող ենք հավաստել, որ «Մատենանի» ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն թարգմանությունները որոշ չափով արտացոլում են հանճարեղ Նարեկացու իրական մեծությունը: «Մատենանի» յուրաքանչյուր

²⁴ St. Grigor Narekatsi. Speaking with God from the Depths of the Heart, translation and introduction by Thomas Samuelian, Yerevan, 2001, p. 25-26.

²⁵ Նույն տեղում, էջ 53:

²⁶ Մաթեան Ա., Գրիգոր Նարեկացու Մատենանը եւ իրանական միստիկ գրականութիւնը (Հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Ժ տարի, 2002-2006, Անթիլիաս-Լիբանան, 2006, էջ 101-108):

թարգմանիչ հաշվի էր առնում նախորդների ձեռքբերումներն ու կորուստները, միննույն ժամանակ, աշխատում էր չկրկնել նրանց և լրացնել բացթողումները²⁷:

Բնարկե, Նարեկացու երկի ամենահաջողված թարգմանությունն անգամ բնագրի հետ չի կարող համեմատվել: Սակայն գնահատելի է թարգմանիչների կատարած հսկայական աշխատանքը, քանզի նրանց շնորհիվ է, որ աշխարհը հաղորդակցվում է Նարեկացու հանճարին, և հայ ժողովրդի մեծ մշակույթը ճանաչելի է դառնում այլ ազգերին:

ПЕРЕВОДЫ “КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ” ГРИГОРА НАРЕКАЦИ

АПРЕСЯН А. Г.

Резюме

“Книга скорбных песнопений” Григора Нарекаци была переведена на французский, русский, английский, персидский языки. Некоторые переводчики “Книги скорбных песнопений” переводили произведение Григора Нарекаци как молитвенник, другие же – как поэтическое произведение. Но при этом всех переводчиков объединяло стремление сохранить дух оригинала, особенности языка и стиля Нарекаци, структуры и поэтики его бессмертной “Книги скорбных песнопений”.

TRANSLATIONS OF GRIGOR NAREKATSI'S “THE BOOK OF LAMENTATIONS”

A. APRESYAN

Abstract

Grigor Narekatsi's “The Book of Lamentations” was translated into French, English, Russian and Persian. Some translators represented the “Book” as a prayer-book, some others translated it as a poetic composition. However, all translators have been united by the common desire to preserve the spirituality of the original text, the features of language and style of Narekatsi, the structure and poeticism of his immortal “Book of Lamentations”.

²⁷ Մյուս միտքն տե՛ս Գրիգոր Նարեկացի. *Книга скорбных песнопений, перевод с древнеармянского В. Микушевича, с. 15.*